NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2018 թվականի N ՑՊ-011-06/18
ք. Երևան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԱՊԱՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Օպերատոր) «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 21-րդ գլխի 107 կետի 5) ենթակետի, ինչպես նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 48 ամիս շրջանառելիության ժամկետով, տարեկան 8% անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնային, վաղաժամկետ հետգնման հնարավորությամբ 40,000 (քառասուն հազար) հատ անվանական պարտատոմսերի (ARBKB8) շրջանառության ժամկետը լրանալու հանգամանքը և Օպերատորի «Բորսայական ծառայությունների դեպարտամենտի» կողմից 2018 թվականի հունիսի 8-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 107 կետի 5) ենթակետի և Օպերատորի Կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 48 ամիս շրջանառելիության ժամկետով, տարեկան 8% անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնային, վաղաժամկետ հետգնման հնարավորությամբ 40,000 (քառասուն հազար) հատ անվանական պարտատոմսերը, որոնց շնորհվել է AMARBKB82ER9 ծածկագիրը և ARBKB8 հապավումը, ապացուցակել և առևտուրը դադարեցնել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, ինչպես նաև դադարեցնել դրանցով հասցեական և ռեպո գործաքներ կնքելու թույլտվությունը:
2. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և 1 աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին Առևտրային համակարգի միջոցով տեղեկացնել Շուկայի մասնակիցներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**